

## ՍԱՐԴՊԻ ԷՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՎԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԾՈՒՂ

### Ս. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Փիլիսոփայական մարդաբանության մեջ թերևս ամենաշատ փիճարկվող հարցը վերաբերում է մարդու էության և գոյության փոխհարաբերությանը: Խոսքն այն մասին է, թե ինչպիսին է մարդու էությունը, ինչպես և ինչ չափով է այն փոխվում անհատական գոյության ընթացքում, իր վրա կրում ամեն մի կոնկրետ պատմական դարաշրջանի ազդեցությունը: Մարդու էությունը բազմաչափ երևույթ է և ներառում է նրա սեռային հատկությունների ամբողջությունը՝ բանականությունը, զգայական աշխարհը, աշխատելու, ստեղծագործելու կարողությունը, կամքը, սոցիալական հիշողությունը, լեզուն և այլն: Մի խոսքով, դա մարդու ներուժն է, որն իրացվում է աշխարհի հետ ունեցած նրա ճանաչողական, գործնական, արժեքային և այլ կարգի հարաբերություններով, որի շնորհիվ միասնական գործընթացի մեջ վերարտադրվում են կեցության պայմանները և ինքը՝ մարդը: Գոյություն ունենալ նշանակում է մտածել, գործել, անվերջ լինելիության գործընթաց ապրել, դրանով իսկ հնարավորը դարձնել իրականություն: Մարդու էության և գոյության միասնությունը, բազմազան կապերն ու հարաբերությունները ամբողջական ձևով արտահայտվում են ժամանակի և տարածության մեջ անընդհատ փոխակերպվող կեցությամբ, որը ներառում է մարդու զարգացման և նրա անհատականության ձևավորման այլընտրանքային հնարավորությունները, համընդհանուր պայմանները:

Մարդկային գոյությունը կեցության անդադար որոնումն ու նրա իմաստի ըմբռնումն է: Այդ ճանապարհով մարդը ձգտում է իրացնել իր հիմնարար պահանջ-մուտքները: Անտիկ աշխարհի փիլիսոփայության մեջ կեցությունն ընկալվել է իբրև կայուն ու անփոփոխ սուբստանցիոնալ իրողություն: Գրեթե այդպես է մեկնաբանվել միջնադարյան փիլիսոփայության մեջ, միայն այն տարբերությամբ, որ այստեղ առկա կեցության փոխարեն մարդու գոյության հաստատուն և հուսալի հիմքը աստվածային կեցությունն է: Երկու դեպքում էլ գոյության հիմք է համարվում մարդուց դուրս գտնվող «օբյեկտիվ» կեցությունը: Նոր դարաշրջանի փիլիսոփայության մեջ օբյեկտիվ կեցությունը փոխարինվեց սուբյեկտիվ կեցությամբ: «Մտածում եմ, նշանակում է գոյություն ունենալ» Ռենե Դեկարտի հայտնի դրույթով գոյության պայման համարվեց միակ հավաստի ռեալություն հանդիսացող մարդկային սուբյեկտիվությունը՝ բանականությունը, մտածողությունը: Բանականությունն ընդունվեց որպես համընդհանուր կեցության հիմք: Իշխող դարձավ այն գաղափարը, որ բանականությունից դուրս ոչինչ չկա, գոյություն ունեցող ամեն ինչ բանական է: Նման մտտեցմամբ կեցությանը մարդկային իմաստ հաղորդվեց, և հաղթահարվեց մարդու էության ըմբռնման «օբյեկտիվացված» սկզբունքը, նրա միակողմանիությունը, բայց այս դեպքում տուրք տրվեց մյուս ծայրահեղությանը, չափազանցվեց սուբյեկտիվի դերը:

Մարդու կեցության համակարգում սուբյեկտիվը և օբյեկտիվը ներառված են մեկը մյուսի մեջ և միասնություն են կազմում: Ուստի չի կարող լինել օբյեկտ առանց սուբյեկտի և ընդհակառակը: Հետևաբար դրանց փոխհարաբերությունը պետք է դիտել ներդաշնակության որոշակի չափի մեջ: Բայց և այնպես գոյաբանական առումով այդ երկու գործոնները չեն կարող հավասարազոր լինել և նույն

դերը կատարել մարդու լինելիության գործընթացում: Սուբյեկտիվը, որն անմիջականորեն առնչվում է մարդու վերափոխիչ գործունեության հետ, բոլոր դեպքերում պահպանում է իր գերակայությունը: Բայց այստեղ գործում է նաև այն օրինաչափությունը, որ մարդկային սուբյեկտիվության դրսևորման աստիճանը եթե ոչ անմիջական, ապա միջնորդավորված ձևով որոշվում է արտաքին օբյեկտիվ պայմանների զարգացման մակարդակով: Այս ակնհայտ իրողությունը ժխտվում է սուբյեկտիվիստական փիլիսոփայության որոշ ուղղությունների, հատկապես գոյության փիլիսոփայության կողմից: Այստեղ ընդգծվում է այն միտքը, որ մարդն ազատ է իր ընտրությունների մեջ, ինքն է սահմանում գոյության իր «օրենքը», իսկ արտաքին օբյեկտիվ հանգամանքները միայն մարդու կամքի վրա բռնացող, նրա ազատությունը սահմանափակող արտաքին օտար ուժեր են, որոնցից նա պետք է ձգտի ազատվել: Աթեիստական էկզիստենցիալիզմի ներկայացուցիչ Ժան Պոլ Սարտրի խոսքերով ասած՝ ոչ մի օբյեկտիվ իրադրություն չի կարող մարդուն զրկել նրա անկապտելի ինքնաբավ ազատությունից:

Ազատությունը ամենևին չի հիմնվում օբյեկտիվ անհրաժեշտության ճանաչման վրա, այն բանի վրա, թե մարդ իր ձգտումներն իրականացնելիս որքանով է հաշվի առնում իրենից անկախ ճանաչված անհրաժեշտությունը: Այստեղ ազատությունը մեկնաբանվում է լիակատար ինդետերմինիզմի ոգով: Բայց ճշմարտությունն այն է, որ մարդը չի կարող բացարձակապես ազատ լինել իր կեցության սուբստանցիոնալ հիմքերից, նրա ազատությունը միշտ հարաբերական է: Ընդ որում, ինչքան արտաքին աշխարհը բարդանում է, այնքան ավելանում են նաև մարդու ազատությունը սահմանափակող գործոնները, և շատ դեպքերում այդ գործոնների համակարգում իր դերն է կատարում նաև ինքը՝ մարդը՝ հոգեկան վիճակի այնպիսի դրսևորումներով, ինչպիսիք են անկայուն ու կասկածամիտ բնավորությունը, չափից ավելի զգուշավոր վարքը, տագնապը, անհանգստությունը, անվճռականությունը, ստեղծված իրավիճակում արագ կողմնորոշվելու անկարողությունը և այլն: Այս ամենի շնորհիվ ավելի են սրվում մարդու կեցության, էության և գոյության միջև եղած հակասությունները: Դա պայմանավորված է ամենից առաջ այն բանով, որ արդի դարաշրջանին բնորոշ գոյության պայմանների կտրուկ փոփոխության հետևանքով կեցության ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ ռեալությունը, որն անմիջապես կապված է մարդու ներքին աշխարհի հետ, նույնպես դարձել է անկայուն, անորոշ, խիստ փոփոխական, որոշակի օրինաչափության չենթարկվող, անհատական բազմազանություններով արտահայտվող մի իրողություն: Այս իրավիճակում մարդը երկակի օտարում է ապրում, օտարում՝ արտաքին աշխարհից և ինքն իրենից, կորցնում իր հաստատուն տեղը գոյության աշխարհում, դառնում «անտուն թափառական» (Մ. Բուբեր): Բայց մարդն աստիճանաբար հասկացավ, որ աշխարհն այդպիսին է դարձել իր «վերափոխիչ» գործունեության պատճառով՝ իբրև նրա բանականության զարգացման մակարդակի համարժեք արտահայտություն: Մարդը բանական էակ է, բայց միշտ չէ, որ նրան հաջողվում է աշխարհը վերափոխել բանականության օրենքներին համապատասխան: Եվ որպես դրա անմիջական արդյունք՝ աշխարհում տեղ են գտնում անբանական, ոչ մի օրինաչափության չենթարկվող, չգիտակցված, տարերային գործընթացներ, և մարդու գոյության համար ստեղծվում է ոչ այնքան բարենպաստ բնական ու սոցիալական միջավայր: Մարդու մտավոր կարողությունը զարգանում և ընդլայնվում է կենսաբանական և սոցիալական էվոլյուցիայի բնականոն ընթացքով, ուստի ժամանակի մեջ նա միշտ դրսևորում է իր սահմանափակությունը:

Հայտնի է, որ մարդկությունն իր ներուժի դեռ մի չնչին մասն է օգտագործում: Դրա իրացման չափը պայմանավորված է ամենից առաջ հասարակական որոշակի պահանջարկի առկայությամբ: Մյուս կողմից պետք է նշել, որ շատ բարձր

գարգացման մակարդակում անգամ մարդկային բանականությունն ի գորու չէ ներառել օբյեկտիվ իրականության իմացության ողջ գործընթացը, ճիշտ ընկալել և ըմբռնել կյանքի հարաշարժ շրջապատույտի մեջ տեղի ունեցող փոփոխությունների իրական պատճառները: Բանականությանն անհասանելի է դառնում մարդու բարդ ու հակասական իռացիոնալ աշխարհն իր անհատական գոյության բազմազան ու բազմաշերտ դրսևորումներով: Մարդն ավելին է, քան առկա կեցությունը, նրա կյանքի շատ երևույթներ իրական, առարկայական աշխարհի շրջանակներից «դուրս» են: Դրանք արտահայտվում են ներգայական իռացիոնալ ապրումներով և գտնվում խորհրդավորության, երևակայության ոլորտում, անդրկեցիկ աշխարհում: Այս դեպքում կարելի է ասել, որ մարդը բառիս բուն իմաստով իր կեցությամբ իմացության օբյեկտ չի դառնում, նա միշտ սուբյեկտ է խիստ անկայուն ու հարափոխ պայմաններով, գոյության աշխարհի հետ ունեցած միջնորդված կապերով ու հարաբերություններով: Հենց մարդկային սուբյեկտությամբ է վերարտադրվում առաջընթաց ապահովող կեցության սոցիալական և հոգևոր էներգիան, որի արտահայտման չափը և դրսևորման ուժը որոշվում են մարդու բանականության, նրա անդրարդարձական գիտակցության, հոգևոր աշխարհի գարգացման մակարդակով: Դրանով են իմաստավորվում կյանքի ռեալ իրողություններին հասու լինելու հնարավորությունները:

Անընդհատ փոխակերպվող աշխարհը և նրանում ներկայացված մարդու էությունական ուժերի օբյեկտիվացված ու սուբյեկտիվացված արդյունքը, որպես կանոն, հիմնականում համարժեք են մարդու գիտակցության մակարդակին, թեև այստեղ հնարավոր են նաև շեղումներ, անհամապատասխանություններ: Թեև մարդն ինչպես մտածում, այնպես էլ գործում է, բայց գործունեության արդյունքը կարող է հավասարագոր չլինել գործադրած ջանքերին, ծախսված միջոցներին և սպասելիքներին: Դա մասամբ պայմանավորված է այն բանով, որ մարդու հարաբերությունն աշխարհի հետ հետզհետե ավելի միջնորդավորված բնույթ է կրում, որի վառ ապացույցն է «վիրտուալ» աշխարհի գոյությունը, հետևաբար նա չի կարող լիովին տիրապետել մարդկային կեցության բոլոր գաղտնիքներին: Այս դեպքում մարդու հարաբերությունն աշխարհի հետ դառնում է մակերեսային, շատ երևույթներ խորությամբ չեն գիտակցվում, անհասանելի են դառնում անմիջական ընկալմանը, դուրս մնում գործնական հարաբերությունների շրջանակներից, կեցության պայմանները մարդկային իմաստով դարձնում թերի և ոչ լիարժեք: Ըստ այդմ՝ մարդը իր ստեղծածի նկատմամբ մշտապես անբավարարվածության զգացում է ապրում:

Մարդկային բանականության և իրականության միջև գոյություն ունեցող այս հակասությունը հաղթահարվում է բնական անընդհատ արհեստականով փոխարինելու ճանապարհով: Դա վերաբերում է մարդու կենսագործունեության բոլոր ոլորտներին, բայց ամենից շատ առնչվում է մարդկային բանականությանը, շոշափում նրա ճանաչողական հնարավորություններն ընդլայնող տեխնիկական միջոցների, այսպես կոչված, «արհեստական ինտելեկտի», «մտածող մեքենաների» ստեղծման հիմնախնդիրները և այլն: Տեխնիկական միջոցները մարդկային կեցության անբաժանելի մասն են, դրանք օգնում են մարդուն լուծելու կենսական շատ խնդիրներ, իրենց վրա վերցնում նրա մտավոր աշխատանքի որոշ գործառույթներ: Բայց ինչքան էլ օժտված լինեն «մտածելու» կարողությամբ, նրանք լավագույն դեպքում կատարում են մարդկային ուղեղին թնորոշ միայն ձևական, տրամաբանական գործողություններ: Գոյություն ունի այն թյուր կարծիքը, որ, այսպես կոչված, «մտածող» մեքենաները, իբր, իրենց գործողությամբ կարող են հավասարվել մարդկային ուղեղին կամ նույնիսկ զգալիորեն գերազանցել նրան: Բայց իրողությունն այն է, որ մարդկային ուղեղը շատ առումներով գերազանցում է ամենակատարյալ մեքենաներին և ունի այնպիսի հնարավորություն-

Անր, որպիսիք մեքենաները չունեն: Մեքենաները չեն կարող մտածել այնպես, ինչպես մարդն է մտածում: Մարդու այդ առանձնահատուկ ունակությունը կապված է նրա զգացմունքների, երևակայական մտածողության, ինտուիցիայի, նախազգալու կարողության հետ և այլն: Մեքենայի նկատմամբ մարդկային բանականության գերազանցության մասին ավելի որոշակի ու հստակ է արտահայտվել կիբեռնետիկայի հիմնադիր, ամերիկացի գիտնական Նորբերտ Վիները. «Մեքենապաշտության հոգեբանության տեր մարդիկ հաճախ սնվում են այն պատրանքով, որ իբր թե բարձր զարգացած ավտոմատացված աշխարհում պահանջվում է ավելի քիչ հնարամտություն, քան մեր ժամանակ: Սա ակնհայտ մոլորություն է ... Ապագան քիչ է հուսադրում նրանց, ովքեր սպասում են, որ մեր նոր մեխանիկական ստրուկները մեզ համար կստեղծեն աշխարհ, որտեղ մենք ազատ կլինենք մտածելու անհրաժեշտությունից: Ապագայի աշխարհն էլ ավելի դաժան պայքար կպահանջի մեր բանականության սահմանափակության դեմ, նա մեզ թույլ չի տա պատկել մեքենի վրա՝ սպասելով մեր ողբոս ստրուկների հայտնվելուն»<sup>1</sup>: Ուստի բանականությունը միշտ, բոլոր պարագաներում կմնա մարդու էությունը ներկայացնող գլխավոր բնութագիրը՝ օժտված ստեղծագործական ներուժի մեծ կարողությամբ ու հնարավորություններով:

Ամեն մի դարաշրջան, ամեն մի նոր սերունդ, աշխարհի օրգանական զարգացման ուղիով պայմանավորված, բանականության զարգացման, մտավոր ներուժի իրացման մի նոր առաջընթաց քայլ է կատարում: Մարդկությունն ապրում է նաև այնպիսի պահեր, երբ մարդկային այդ ներուժի հանդեպ «պահանջարկի» աճի շնորհիվ նրա զարգացումը դառնում է ավելի ինտենսիվ և համապարփակ, դրան համապատասխան էլ ծնվում են մտքի տաղանդներ ու հանճարներ: Այդպիսին էին, օրինակ, մի ամբողջ հազարամյակ ընդգրկող հունական փիլիսոփայության, հոգևոր մշակույթի զարգացման շրջանը, Վերածննդի դարաշրջանը, որը շարունակվեց XVII դարում, երբ ստեղծվեց բանականության պաշտամունքը, և այն ընդունվեց իբրև համընդհանուր կեցության հիմք: Բայց XX դարից սկսած, երբ փիլիսոփայական գիտելիքի համակարգում հաստատուն տեղ գրավեց իուսցիոնալ մտածելակերպը, ուժեղացավ անվստահությունը ուսցիոնալ մտածողության հանդեպ: Այդ իրողությունը պայմանավորված էր նաև մարդու գոյության արտաքին աշխարհի վիճակով, որն իր հակասություններով, անբանական զարգացումներով, շեղումներով, ճգնաժամային իրավիճակներով մարդու համար ստեղծում էր ճիշտ մտածելու, կողմնորոշվելու, իրական կյանքի գիտակցության մեջ համարժեք արտացոլելու դժվարություններ: Խնդիրն ավելի է բարդանում կապված նաև այն բանի հետ, որ բանականությունն ավելի հաճախ հանդես է գալիս վերացական, խիստ ուսցիոնալացված մտածողության տեսքով, որի շնորհիվ նա ավելի է հեռանում իրական կյանքից, հատկապես նրան սնուցող իուսցիոնալ աշխարհից: Եվ պատահական չէ, որ բոլոր ժամանակների համար միշտ հրատապ է եղել կյանքի հետ բանական մտածողության փոխադարձ կապի, նրա գործնական ուղղվածության խնդիրը: Այդ է նկատի ունեցել Ֆրենսիս Բեկոնը, երբ գրել է, որ բանականությանը պետք է տալ ոչ թե թևեր, այլ ավելի շատ կապար ու ծանրություն, որպեսզի դրանք կանխեն նրա անսանձ թռիչքները և շաղկապեն իրականությանը: Նա նշել է նաև բանական մտածողությանը առնչվող մի այլ իրողություն՝ արդեն կապված մարդու բնույթի, էության, իմացության գործընթացում արտահայտվող՝ շեղված տրամաբանության, անկայուն հոգեվիճակի հետ, երբ մարդկային բնությանն ավելի շատ հարազատ է դառնում հիմարությունը, քան իմաստությունը<sup>2</sup>: Բանականությունը կեցության սուբստանցիոնալ հիմք է դառնում, երբ իրար է կապում իմացության բոլոր ձևերը և մարդու հոգևոր

<sup>1</sup> Н. Винер. Творец и робот. - "Новый мир", 1995, № 2, с. 10.

<sup>2</sup> Տե՛ս Ս. С. Таранов, Философия сорока пяти поколений, М., 1999, էջ 381:

աշխարհում պահպանում իր գերակայությունը: Այդ աշխարհը հանդես է գալիս բանականության, զգացմունքի, սրտի և կամքի միասնությամբ, որոնք մարդու էությունը ներկայացնող իսկական մարդկային տարրերիչ հասկություններն են: «Բանականության ուժը իմացության լույսն է, կամքի ուժը՝ բնավորությանն է ներգիսն, զգացմունքի ուժը՝ սերը»<sup>3</sup>: Հարկ է նաև նշել, որ բանականությունը, սիրտը և կամքը թեև մի միասնությունն են կազմում, բայց դժվար են ներդաշնակվում. դրանց միջև միշտ առկա են հակասություններ, որսևորման ուժի անհամաչափություններ և անհամաձայնություններ: Դա մարդու հոգևոր աշխարհի իրական վիճակն է: Ժամանակակից աշխարհը արժեքային իր նոր կողմնորոշումներով, զարգացման առանձնահատկություններով ավելի է խորացրել «անհամաձայնությունը», խզումը մարդու բանականության և զգացմունքային աշխարհի միջև: Սիրտը հոգևոր ապրումների կենտրոնն է. նա ճանաչում է աշխարհը կենդանի զգացումով, բնածին ինտուիցիայով: Դրա համար էլ երբեմն սրտի իմաստությունն ավելի խորն է, քան այն, ինչ առաջարկում է միտքը, խելքը: Այնուամենայնիվ, բնությունն իր ռազմավարական կողմնորոշման մեջ գերապատվությունը տվել է բանականությանը՝ որպես մտածողության բարձրագույն ձև, որն իր նախնական հիմքով կապված է զգայական իմացության հետ: Մարդն աշխարհի հետ հարաբերվում է իր բազմաչափ էության բոլոր մակարդակներով՝ սկսած տիեզերքից և վերջացրած առօրեական կյանքով: Դրանք ներկայացնում են մարդկային կեցության համընդհանրությունը: Դասական փիլիսոփայության մեջ մարդը դիտվել է որպես ունիվերսումից, համաշխարհային ամբողջից կտրված կեցության ինքնուրույն տարր: Անտեսվել է այն իրողությունը, որ դրանք մի համակարգի մեջ են և ենթարկվում են էվոլյուցիոն զարգացման նույն օրենքներից: Մարդու էության և գոյության հարաբերության մեջ, նրա կեցության կառուցվածքում համակարգատեղծ գործոնի դեր է կատարում նրա բանականությունը, և նա է համընդհանրության որոշակի կարգ ու հարաբերությունն ձևավորում կեցության բոլոր տարրերի միջև: Այստեղից հետևում է, որ կեցությունը մարդուց դուրս գտնվող իրողությունն չէ, այլ նրա գոյության ներքին և արտաքին աշխարհն է՝ իր միասնությամբ և բազմազանությամբ: Մարդկային կեցությունը միշտ աղընթեր, հարափոխ մեծություն է ժամանակի ու տարածության մեջ և չափվում է ամեն մի մարդու զարգացման հնարավորություններով: Աշխարհն ու մարդը, մեկը մյուսի մեջ ներառվելով, զարգացման բնորոշ առանձնահատկություններով, հակասություններով, գոյության պայմանների արտադրության և վերարտադրության գործընթացով ապահովում են զարգացման որոշակի ուղղվածություն: Կեցության պայմաններ ստեղծողի, արժևորողի, պահապանի դերում մարդն է: Նրա գործունեության շնորհիվ ինչ-որ առումով աստիճանաբար վերանում է մարդու և աշխարհի հարաբերությունը ներկայացնող օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի միջև եղած սահմանը: Այս դեպքում որոշակի իմաստով օբյեկտիվն էլ է «սուբյեկտիվանում» և մարդկային իմաստ ստանում: Եվ քանի որ մարդն ու աշխարհը մի միասնությունն են, ապա այն, ինչ տեղի է ունենում աշխարհի հետ, փոխանցվում է մարդուն՝ ապրումների, մտահոգությունների, տազնապների ձևով: Աշխարհի վիճակը, որ հետզհետե ավելի է վատանում, անհանգստացնում է մարդուն: Ու եթե մարդը չհասկանա, թե ինչ է կատարվում աշխարհի հետ և չլսի նրա օգնության կանչը, ապա նա ընդունակ չի լինի նրանում ճանաչել նաև իր սեփական մտքերն ու խոհերը, ձգտումները և իր վրա վերցնել նրա պահապանի պատասխանատվությունը:

Ամեն մի դարաշրջանում ստեղծված գոյության պայմաններն ապահովում են մարդու էութենական ուժերի զարգացման և իրացման այն չափը, որը շատ թե քիչ համապատասխանում է տվյալ ժամանակաշրջանի առաջընթացի պահանջներին:

<sup>3</sup> "Мир философии". М., 1991, с. 34.

Սա այն դեպքում, եթե զարգացումը տեղի է ունենում բնականոն ընթացքով, չի խախտվում բնական և սոցիալական աղետներով և այլ կարգի անկանոն շեղումներով: Մարդու էվոլյուցիոն զարգացման ընթացքի մեջ միասնաբար են հադես գալիս նրա կեցության ժամանակային բոլոր մոդուսները՝ անցյալը, ներկան և ապագան: Մարդը չի կարող անտարբեր լինել իր անցյալի հանդեպ, նա գնահատում է իր ապրած կյանքը, ձեռք բերածը, ափսոսում չարածի, թույլ տված սխալների համար: Բայց նրա համար ավելի մտահոգիչ է ներկան ու ապագան: Մարդկային կեցությունն իր ամբողջական կառուցվածքով՝ առարկայական-նյութական, սոցիալական ու հոգևոր, օբյեկտիվ և սուբյեկտիվ արդյունքով, գոյանում է մարդկության հավաքական ուժով, որտեղ ամեն մի առանձին մարդ ունենում է իր բաժինը: Եվ այստեղ հասարակական ու անհատական կեցությունները հաստատում և ցուցադրում են իրենց փոխադարձ կախվածությունը: Ընդ որում, կեցությունն իր ընդհանրությամբ իրական արժեք է դառնում միայն այն դեպքում, եթե նրանում պահպանվում է անհատական կեցության «ինքնուրույնությունը», անկախությունը՝ որպես մարդու գոյության իրական հիմք և ամբողջի ձևավորման ու զարգացման պայման: Դրա հետ մեկտեղ՝ մարդու համար թերևս ամենադժվարին խնդիրը ընդհանուրի մեջ սեփական «անկախության» պահպանումն է՝ իբրև ինքնաբավ մեծություն, որի համար պահանջվում է ունենալ հոգևոր զարգացման բարձր մակարդակ, ուժեղ կամք, արժանապատվության մեծ զգացում, ինքնհաստատման ներքին պահանջմունք և անձնային այլ որակներ: Մարդուն միշտ հետապնդում է ընդհանուրի մեջ տարրալուծվելու, սեփական դեմքն ու անհատականությունը կորցնելու «անիսկական» գոյության մեջ խորատուզվելու, սոցիալական որոշակի դերակատարում ունեցող, անձի փոխարեն մեկ ուրիշի պատրանքը, «պատճենը» լինելու վտանգը: Մարդու զարգացումն ավելի ինտենսիվ է ընթանում այնքանով, որքանով նա կարողանում է «անկախ» լինել արտաքին պարտադրանքներից և իրացնել իր էությանը բնորոշ ներքին հնարավորությունները, հաստատել իր «ես»-ը: Անհատականության հաստատման նման ձգտումը ոչ թե հանրությունից մեկուսանալ է նշանակում, այլ ենթադրում է դերային կարգավիճակով նրա մեջ ներառում: Մարդու գոյությունն իմաստավորվում է հասարակության, մարդկանց հետ ունեցած փոխադարձ կապերով ու հարաբերություններով, որտեղ ձևավորվում ու դրսևորվում են նրա անձնային հատկությունները: Այս ճանապարհով է նա դառնում պատմական գործընթացի իրական սուբյեկտ: Անձի և հասարակության նման փոխհարաբերությամբ ամրապնդվում են մարդկանց միավորող հոգևոր հիմքերը, բոլորի սեփականությունն է դառնում ընդհանուրի անմիջական շփման արդյունքում ստեղծված այն հոգևոր հարստությունը, որը մինչ այդ մնում էր թաքնված, պատսպարված, քողարկված և մեկուսացված այլ մարդկանց անհատական աշխարհներում: Մարդու հասարակական և անհատական կեցությունը չի սահմանափակվում միայն գոյության առկա հնարավորություններով, այն ընդգրկում է նաև ներկայի մեջ ներառված անցյալի ժառանգությունը, երևակայությամբ արտահայտվող ապագայի տեսլականը՝ իրականություն դառնալու ակնկալիքով: Անցյալի, ներկայի և ապագայի՝ իբրև կեցության ժամանակային մոդուսների կապը բարդ ու հակասական է ինչպես ճանաչողական, այնպես էլ պատմական գործընթացի մեջ դրանց հերթափոխման, ժառանգականության կապի ապահովման և գոյության համընդհանուր պայման դառնալու առումով: Իսկ քանի որ մարդու կեցությունն իր իրական վիճակում ներկայով է չափվում, ապա և՛ անցյալը, և՛ ապագան գնահատվում են ներկայի մեջ դրանց ներառվածության աստիճանով: Այստեղ մենք գործ ունենք նաև այն իրողության հետ, որ հասարակական կյանքի արագ ոլորտի պայմաններում ներկան միշտ մնում է խորապես չընկալված, չճանաչված և անցյալ է դառնում՝ իր հետ տանելով դեռ չբացահայտված, չիրացված մարդկային մեծ ներուժ, իսկ ցանկալի ապագան էլ ուշ է գալիս՝

Անրկայից հիմնավոր ու «երաշխսավորված հայտ» չստանալով: Այս դեպքում մարդն ավելի երկար է մնում «Անրկայում», իր վրա կրում կյանքի ողջ լարվածությունը և, անբավարվածության խոր զգացում ապրելով, հույսը կապում գայթակղիչ թվացող և, որպես կանոն՝ չափազանցված ապագայի հետ: «Մարդիկ, ապրելով ձգտումներով և հույսերով, այսինքն՝ ապագայով, - գրում է Ա. Շոպենհաուերը, - անհամբերությամբ միշտ շտապելով առաջ՝ ապագա իրադարձություններին ընդառաջ, և ենթադրելով, որ այդ իրադարձություններն իրենց հետ կբերեն իսկական երջանկություն, մույն ժամանակ, տվյալ պահին բաց թողնելով Անրկան, չեն հասցնում Արանից հաճույք ստանալ և այն վայելել: Այդ մարդիկ մնան են այն ավանակներին, որոնց ստիպում են ավելի արագ գնալ, որպեսզի ավելի շուտ հասնեն առջևում երևացող խոտին... Եվ բացառապես ու մշտապես ապագայի պլաններով ու հոգսերով զբաղվելու կամ էլ ավստասանքով անցյալին տրվելու, այն հիշելու փոխարեն, մենք պետք է հասկանանք, որ միայն Անրկան է իրական, միայն նա է հավաստի»<sup>4</sup>: Ներկայի ամեն մի օր իր մեջ կրում է հավերժության մասնիկը, հետևաբար Արա մեջ է մարդու գոյության գաղտնիքը և իմաստը: Իրոք, մարդու կյանքի կենսական հիմնահարցերը, Արա պահանջմունքների բավարարումը, ապրումներն ու տազնապները գլխավորապես Անրկայի հետ են առնչվում և Արանից են բխում: Բայց մարդը չի կարող ապրել նաև առանց իդեալի, Անրկան Արան միշտ չի բավարարում, և նա անընդհատ ձգտում է լավին ու կատարյալին. դրանով է ապահովվում մարդկային կյանքի Արացումը և Արա շարունակականությունը: Մարդու կյանքի այս երկատվածությունը վկայում է Արա էության և գոյության միջև մշտապես ծագող հակասության մասին: Բանն այն է, որ կյանքի պայմաններն այնքան արագ են փոխվում, այնպիսի հակասական միտումներ են ի հայտ գալիս, որ դժվար է լինում կռահել իրադարձությունների ուղղվածությունը, կանխատեսել զարգացման հնարավոր հետևանքները և ակնկալել ցանկալի արդյունք: Այս իրավիճակում զարգացման գործընթացի մեջ Անրկան ոչ մի «օբյեկտ» և «սուբյեկտ» մինչև վերջ ձևավորվելու, Անրկան հնարավորությունները լիովին բացահայտելու, ի հայտ բերելու համար ժամանակ չի ունենում և այդ պատճառով ըստ արժանվույն չի գնահատվում: Ստվերակերպ արժեքներն այնքան բազմազան ու անորոշ են և այնքան արագ են գալիս-գնում, որ դժվար է որոնել հստակ սահման ստորի և վեհի, բարու և չարի, ճշմարիտի և կեղծի, արդարացիի և անարդարացիի միջև: Այստեղից էլ մեր հոգևոր, հասարակական կյանքում որոշակիության, կայունության, վստահության բացակայությունը<sup>5</sup>: Մյուս կողմից՝ ապագայի հետ առնչվող խնդիրները լուծելու համար մարդը պետք է մեծ ջանքեր գործադրի, հաղթահարի որոշակի դժվարություններ և հանում դրա պատրաստ լինի իրեն «գրկել» Անրկայի շատ «հաճույքներից»՝ չենթարկվելով Արա գայթակղություններին: Սակայն մարդն ունի թուլություններ և հազվադեպ է պատրաստ «գոհողությունների». նա ավելի շուտ գերադասում է առօրյա «վայելքները», քան անորոշ ապագայի հետ կապված սպասելիքները: Դրանով մարդու մեջ «կյանքը» «լիարժեք ապրելու, վայելելու» պատրանք է ստեղծվում: Բայց փաստորեն նա հետ է մնում սոցիալական առաջընթացի ոլորտից, Անրկայի շատ անելիքներ անընդհատ թողնում վաղվան՝ մտածելով, որ ամեն ինչ դեռ առջևում է, և դեռ կհասցնի շատ բան անել: Նման մտածելակերպն առնվազն մոլորություն է այն պարզ պատճառով, որ ժամանակը դատարակություն չի սիրում, Արա յուրաքանչյուր պահը էվոլյուցիոն շղթայի մի օղակ է, որն ապահովում է պատմական գործընթացի հաջորդականությունը, որտեղ ամեն մի անհատ պետք է ունենա իր տեղը և մասնակցության իր բաժինը: Խնդիրն այն է, թե մարդն ինչքանով է

<sup>4</sup> А. Шопенгауер. Афоризмы усвоения житейской мудрости. М., 2003, с. 148-149.

<sup>5</sup> Տե՛ս Ս. Сорокин, Социальная и культурная динамика, СПб., 2000, էջ 366:



իրացնում իր ներքին հնարավորությունները, և ինչքանով են դրանք իրենց առարկայական արդյունքով ներառվում գոյության միջոցների վերարտադրական գործընթացի մեջ ու դառնում ընդհանուրի զարգացման պայման: Ընդ որում, ինչքան հարուստ է մարդու առօրյա կյանքը, խտացված ժամանակի ամեն մի միավորը, այնքան մեծանում են նրա անհատական զարգացման այլընտրանքային հնարավորությունները: Մարդը հանդիպում է արտաքին աշխարհից եկող բազմաթիվ արգելքների, որոնց հաղթահարումը ազատության շրջանակների ընդլայնում է ենթադրում: Դրանով է իմաստավորվում մարդու գոյության սոցիալական աշխարհը, որն իր մեջ է առնում անհատական կյանքի ողջ բազմազանությունն իր հակասական զարգացման միտումներով: Այստեղ տեղին է հիշատակել իրացիոնալիզմի ներկայացուցիչ Անրի Բերգսոնի այն միտքը, որ ամբողջ փիլիսոփայության ելակետը կազմող առավել հավաստի փաստը մեր սեփական գոյությունն է, որը դրսևորվում է զգայությունների, հույզերի, ցանկությունների անընդհատ հերթափոխության մեջ: Ապրումների այդ հոսքը միակ իսկական ռեալությունն է ... Մեր կյանքի յուրաքանչյուր պահ ոչ մի օրինաչափության չենթարկվող մի ստեղծագործական ակտ է, որն առաջ է բերում չնախատեսված, անսպասելի վիճակներ<sup>6</sup>: Դա հատկապես վերաբերում է մարդու հոգևոր կյանքին, նրա գոյության իմաստի բարոյաարժեքային ըմբռնումներին, այս կամ այն իրավիճակում ճիշտ ընտրություն կատարելու հնարավորություններին և այլն:

Մարդու կյանքը հասարակության հետ ունեցած բազմազան փոխադարձ կապերի ու հարաբերությունների ամբողջությունն է, որտեղ ձևավորվում է անձը՝ որպես որոշակի սոցիալական դերեր կրող սուբյեկտ: Առանձին անհատը հանրության մեջ ներառված ամենաանհանգիստ տարրն է, նա անձնական պահանջ-մունքների բավարարման ներքին մղումով միշտ փորձում է հաղթահարել առկա կեցությունը, դուրս գալ նրա շրջանակներից և ընդլայնել իր զարգացման հնարավորությունները: Այդ գործունեության ընթացքում զարգանում է նաև նրա ինքնագիտակցությունը, որի հիմքի վրա ձևավորվում է նաև կոլեկտիվ բանականությունը, մարդկությանը միավորող հոգևոր էներգիան: Այդ էներգիան դառնում է ամբողջ զարգացման հիմնական պայմանը: Դրանով մարդկությունը թևակոխում է բանական էներգիայի իշխանության դար, որի համար գոյություն չունի ժամանակի և տարածության սահմանափակում: Այն գործում է ընդլայնված վերարտադրության օրենքով և հավաքական ուժ դառնալով՝ թափանցում կյանքի ներքին, խորքային շերտերը և զարգացման նոր ուժ հաղորդում նրան:

Մարդկության միավորման փորձերը միշտ ձախողվել են, երբ դրա համար անհրաժեշտ միջոցների ընտրության ժամանակ հիմնականում նկատի է առնվել մարդկային հարաբերությունների զուտ նյութական կողմը: Մինչդեռ մարդկանց իրական միավորումը կարող է տեղի ունենալ հոգեկանության, անձնական էներգիաների միավորման հիմքի վրա, դրանց համակցման ճանապարհով: Մարդու համար ոչ մի էվոլյուցիոն ճանապարհ չի կարող լինել մյուս մարդկանց հետ նրա համախմբումից դուրս: Հասարակությունը ներկայացնող առանձին անհատներ՝ որպես ամբողջի մասեր, կատարելագործվում և ավարտի են հասնում միայն կազմակերպված միասնության մեջ ... Եվ որքան ավելի են նրանք բոլորը միասին Մյուսը դառնում, այնքան ավելի են «իրենց» գտնում և ընդգծում իրենց «ես»-ի խորությունը<sup>7</sup>: Մարդն այդպես է ամրապնդում իր կապերը հասարակության հետ և դառնում կեցության համընդհանուր պայմանների ստեղծման համամասնակիցը: Եվ այս համատեղ գործունեության ու հաղորդակցման ընթացքում էլ գոյանում է մարդկությանը միավորող հոգևոր և մտավոր էներգիան: Դրա հետ կապված՝

<sup>6</sup> Տե՛ս «Ժամանակակից բուրժուական փիլիսոփայություն», Եր., 1983, էջ 865:

<sup>7</sup> Տե՛ս Տեյար դը Շարդեն, Մարդու ֆենոմենը, Եր., 1998, էջ 227:



այստեղ ի հայտ է գալիս նաև մեկ այլ մտահոգիչ խնդիր, թե ինչքանով է արդեն կուտակված, առկա մարդկային հոգևոր ներուժը գործնական կիրառման ասպարեզ գտնում, ինչպես է ձևավորվում՝ և ինչ օրինաչափությամբ է որոշվում նրա նկատմամբ հասարակական պահանջարկը, որի բացակայության պայմաններում խախտվում է ինչպես մարդու, այնպես էլ հասարակության ներաշնչանակ զարգացման հնարավորությունը: Մարդու հոգևոր առաջընթացը նրա էությունը ներկայացնող ներքին հնարավորությունների իրացման ակտիվ գործընթաց է, որի շարժառիթը անձնային պահանջմունքներն են, շահը, իդեալը և այլն: Ինքնիրացումը միաժամանակ հասարակական այս կամ այն պահանջմունքի բավարարում է ենթադրում: Դրանով ավելի են ընդլայնվում մարդու կենսագործունեության սոցիալական տարածությունը, գոյության ընդհանրական պայմանների ու միջոցների վերարտադրության հնարավորությունները: Հասարակական առաջընթացը միշտ ենթադրում է մարդու գործունեության բոլոր ձևերի, նրա ներունակ ուժերի առավել լիազատ արտահայտման անհրաժեշտ «դաշտի» առկայություն, նրանում ծավալվող մարդկային հարաբերությունների կարգավորման սոցիալական, քաղաքական, իրավական, բարոյական նորմերի ու մեխանիզմների ստեղծում ու մշտական կատարելագործում: Թե դրանք ինչքանով են արդյունավետ գործում, դրանով էլ պայմանավորված են մարդու սոցիալական պաշտպանվածությունը, նրա ազատ զարգացման հնարավորությունները:

Մարդը սոցիալական աշխարհում գոյատևում և առաջադիմում է իր ամբողջական կառուցվածքը ներկայացնող, արտաքին միջավայրի ազդեցությամբ անընդհատ փոխակերպվող կենսաբանականի, սոցիալականի, հոգեկանի միասնությամբ: Դրանցից յուրաքանչյուրն ունի փոփոխության, զարգացման, որպես կանոն, իրար չհամընկնող ուրիշ, որը գործում է ինչպես հասարակական, այնպես էլ անհատական կեցության մակարդակի վրա: Բայց դրանք միշտ կրում են նաև հետասերման վտանգներ, որոնք ի հայտ են գալիս մարդու կեցության պայմանների կտրուկ վատթարացման, նրա էությանը ոչ համարժեք, խիստ հակասական, անորոշ ու անկայուն տարերային գործընթացներով ուղեկցվող «զարգացման» արդյունքում: Մարդկությունը ժամանակ առ ժամանակ միշտ առնչվել է այսպիսի իրավիճակների հետ: Բայց դրանք այսօր ավելի ակնհայտ ձևով են արտահայտվում արմատական վերակառուցման բարդ շրջան անցնող, այսպես կոչված՝ անցումային, փոխակերպվող հասարակարգերում: Անցումային հասարակության մեջ, երբ անսպասելի և կտրուկ փոխվում են մարդու կենսագործունեության պայմանները, հասարակական հարաբերությունների մեջ ներառվում նոր արժեքներ, գոյության նոր միջոցներ, առաջադրվում են «խաղի նոր կանոններ», ուժեղանում է մրցակցությունը մարդկանց միջև: Դրանում «հաղթելու», կյանքի կողմից պարտադրվող փորձություններին, դժվարություններին դիմանալու համար գործի են դրվում մարդկային բոլոր ընդունակությունները՝ հնարամտությունը, ձեռներեցությունը, կամքը, համառությունը և այլն: Բայց քանի որ մարդիկ իրենց ընդունակություններով և զարգացման աստիճանով տարբերվում են իրարից և ունեն ելակետային անհավասար հնարավորություններ, ապա տարբեր է նաև յուրաքանչյուրի գործունեության առարկայական արդյունքը: Օտկայական հարաբերությունների պայմաններում այս տարբերությունն ավելի ակնհայտ է դառնում: Այստեղ գործում է նաև այն ընդհանուր սկզբունքը, որ կյանքի լարվածությամբ դիմանալու, առաջադրված նպատակներին հասնելու գործում ավելի «հաջողակ» են դառնում մարդկային այն «տիպերը», որոնք ավելի արագ են կողմնորոշվում ստեղծված իրավիճակում, ճիշտ ընտրում և հաշվարկում նպատակին հասնելու միջոցներն ու հնարավորությունները: Մյուս կողմից՝ հաջողության գրավական է դառնում նաև այն, որ առաջադրված սոցիալական նոր խնդիրները իրենց բնույթով մարդկային որոշակի ընդունակությունների պահանջ են առաջադրում, որոնց կրողներն ունենում են ավելի քարձր հասարակական պահանջ-

ջարկ: Մասնավոր սեփականատիրական հարաբերությունների պայմաններում կյանքը նաև «բնական ընտրության» մի խաղ է խաղում, որից դուրս են մնում շատ մարդիկ, դառնում «ավելորդ», պահանջարկ չունեցող, «գոյության կոփին» անընդունակ: Եվ չկարողանալով վերափոխվել նոր պայաններին համապատասխան՝ այդ «անհաջողակ» մարդիկ, «թերաբժեքության» խոր զգացում ապրելով, կա՛մ համակերպվում են իրենց «ճակատագրին», կա՛մ էլ դառնում շեղված վարքի կրողներ: Իբրև դրա անմիջական հետևանք՝ տեղի է ունենում հանցագործության ան, ավելի են սրվում հասարակության ներքին հակասությունները, մեծանում սոցիալական կյանքի լարվածությունը: Նման իրավիճակում մարդիկ դառնում են ավելի ագրեսիվ և անհանդուրժողական: Մարդկանց ագրեսիվ վարքի դրսևորումներն, անշուշտ, որոշ կենսաբանական-ծագումնաբանական հիմքեր ունեն, որոնք շատ դեպքում հանդես են գալիս որպես ինքնապաշտպանական բնագոյ: Ավելացնենք նաև, որ «ագրեսիան» մարդու լինելիության գործընթացում նաև ներտեսակային ընտրության մեխանիզմի դեր է կատարել: Բայց այն հիմնականում սոցիալական պայմանավորվածություն ունի: Դա ամենից առաջ մարդու հիմնարար պահանջումները չբավարարող, նրա ազատությունն ու իրավունքները սահմանափակող պայմանների դեմ ուղղված ըմբոստություն է: Այս ամենի շնորհիվ մարդու էության և գոյության միջև ծագող հակասությունները հաղթահարվում են ոչ թե կենսաբանական, այլ սոցիալական միջոցներով՝ մարդու ներուժի ազատ զարգացման համար հնարավորությունների ստեղծումով: Մարդու գլխավոր արժանիքներից ու պահանջումներինց մեկն այն է, որ չի ուզում հաշտվել իր ստորացված վիճակի հետ և ամեն կերպ ձգտում է ինքնահաստատվել, ինքնաարտահայտվել, դիմանալ կյանքի փորձություններին և պահպանել իր արժանապատվությունը որպես հոգևոր անձ:

Մարդկությունը կարող է խուսափել սոցիալական հիվանդագին երևույթներից և ստեղծել առաջընթացի առավել բարենպաստ պայմաններ, եթե ի վիճակի լինի իր մեջ պահպանել մարդկայինը, հոգևորն ու բարոյականը՝ իբրև զարգացման գլխավոր երաշխիքներ: Այբեր կամյուի խոսքերով ասած՝ եթե չկա բարոյականություն, բարոյական պատասխանատվություն, ապա չի կարող լինել նաև ապագա: Խոսքն այստեղ գործող, մաքառող, մարտական բարոյականության մասին է, որը պետք է պաշտպան կանգնի արդարությանը, կենսունակին, առաջադիմականին: Աշխարհը խիստ բազմազան է մշակութային արժեքներով, ապրելակերպի նորմերով, ավանդույթներով, զարգացման մակարդակով և այլն: Այն ամփոփում է նախորդ սերունդների բազմադարյան փորձը՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ արդյունքով: Այդ ժառանգությունը, որպես զարգացման համընդհանուր պայման, յուրաքանչյուրին հասնում է անհատականացման չափով: Դրանով ձևավորվում է գոյության մի որոշակի միջավայր, որում տեղի ունեցող ամեն մի փոփոխություն անձնային վերապրումի վիճակ է ստեղծում և մարդու առջև նոր պահանջներ դնում: Դա ամենից առաջ վերաբերում է նրա հոգեղեն էներգիայի ընդլայնված վերարտադրությանը: Այդ հիմքի վրա է ձևավորվում նոոսֆերան՝ մտղորտը, որը ֆիզիկական էներգիայի հետ միասնական աշխարհի անհրաժեշտ բաղադրատարր է: Այդ երկու էներգիաները, մարդու գործունեության շնորհիվ մեկը մյուսին անցնելով, էվելյուցիոն միասնական գործընթացի մեջ են առնում ոչ միայն կենսոլորտի, կյանքի ձևերի, այլև մտղորտի փոփոխությունն ու զարգացումը, միավորում մարդկության ողջ ներուժը և դրանով իսկ ապահովում կենսական աշխարհի հարատևումը, ամրապնդում իրար հաջորդող սերունդների փոխադարձ կապը: Ամեն մարդ իր կեցության և գոյության կոնկրետ դրսևորումներով մասնակցում է բոլոր սերունդներին մի կենդանի շղթայի մեջ կապող կյանքի պայմանների վերարտադրությանը: Ու այդ համատեղ գործունեության ընթացքում ձևավորվում է մարդու անձնական փորձը, կյանքի իմաստի նրա ըմբռնումները, անընդհատ վերափոխվող աշխարհի մասին պատկերացումները և այլն: Այդ

ամենի շնորհիվ ստեղծվում են նաև մարդու էության և գոյության միջև ծագող հակասությունների հաղթահարման նոր հնարավորություններ: Ի տարբերություն էության՝ մարդկային գոյությունն անձնավորված, անհատականացված իրողություն է, այսինքն՝ մարդու ապրած անհատական կյանքն է՝ իրեն հատկացված ժամանակի մեջ շարունակական ընթացքով, որն անկրկնելի է, որոշ իմաստով նաև խորհրդավոր՝ դրսևորման իր յուրահատկություններով: Գոյությունը իրական ընթացքի մեջ հոգեկանության ազատության և պատասխանատվության միասնություն է ենթադրում: Գոյության փիլիսոփայության մեջ նշվում է մարդու գոյության երկու հնարավոր եղանակ՝ անհիսկական և իսկական: Ըստ Մ. Հայդեգերի՝ անհիսկական կեցությունը գոյության այնպիսի ձև է, որի դեպքում մարդկային կեցությունն ամբողջովին կուլ է գնում առարկայական կամ հասարակական միջավայրին: Այս դեպքում իրերի աշխարհը փակում է մարդու տեսադաշտը և սահմանափակում նրա հոգևոր ներուժի ծավալման հնարավորությունները: Իսկական գոյությունը ներկայացվում է որպես մարդու կողմից իր պատմականության, վերջավորության և ազատության գիտակցում, որը մարդուն հասանելի է դառնում կյանքի ճգնաժամային պահերին, սահմանային իրավիճակներում մահվան դեմ հանդիսման: Մարտին Հայդեգերի՝ «իսկական» և «անիսկական» կեցության և գոյության նման ըմբռնումը պետք է ընդունել որոշ վերապահումով: Բանն այն է, որ մարդու իսկական գոյության գիտակցումը նրա ապրած կյանքի «հանրագումարային» արդյունքը չէ: Այն այսպես թե այնպես առկա է և ուղեկցվում է նրա գիտակցական ողջ կյանքի ընթացքում: Ուստի իր պատմականության, վերջավորության և ազատության գիտակցումը մարդուն պետք է հասու լինի ոչ միայն «սահմանային» իրավիճակներում, այլև արտահայտվի սովորական, առօրեական կյանքի բոլոր իրողություններով, աշխարհի նկատմամբ էական դարձած, անձնական փորձով իմաստավորված հարաբերություններով: Այս դեպքում մարդն ընդունակ կլինի վեր բարձրանալու իր տեսադաշտը փակող իրերի աշխարհից և հոգևոր ներուժին ապավինելով՝ տիրապետել կեցության խորքային գաղտնիքներին, բացահայտել դրանց մարդկային իմաստը: Մարդու անհատական զարգացման հնարավորությունները դիմային են դառնում մարդկանց անմիջական շփման, հաղորդակցման գործընթացում և ամբողջական ձևով արտահայտվում «ես»-ի և «դու»-ի փոխհարաբերությամբ, որի շնորհիվ ձևավորվում է նաև «Մենք»-ը՝ որպես իրենց ինքնությունը հաստատող և ընդհանուրի համար պատասխանատվություն կրող անկախ անձերի միավորում: Ինչպես արդեն նշվել է, մարդկանց միավորումը տեղի է ունենում ամենից առաջ հոգեկանության հիմքի վրա, դրանով ավելի ակնհայտ է դառնում հոգևորի նշանակությունը մարդու լինելիության գործընթացում: Դա մարդու ներուժի ընդլայնված վերարտադրության կարևորագույն նախապայմանն է: Բայց մարդն իր ամբողջական կեցությամբ նաև օբյեկտիվ աշխարհի մեջ է և չի կարող չենթարկվել նրա օրենքներին: «Մենք բոլոր կողմերով կապված, շղթայված ենք անհրաժեշտության ուժերով: Մենք մարմնական ենք, դրա համար էլ ենթարկված ենք համաշխարհային մատերիայի կույր, մեխանիկական ուժերին: Մենք ներսից էլ ենք ծանրաբեռնված մեր բնական կյանքին խանգարող կույր, տարերային կենսաբանական ուժերով: Մեր լավ և խելացի ձգտումները բախվում են արտաքին խոչընդոտների կամ էլ ուժասպառ լինում մեր սեփական կույր կրքերով: Ընդ որում, կույր բնությունն այնպես է մեզ ստեղծել, որ մենք դատասպարտված ենք պատրանքի, խարխափելու, թափառելու, մոլորվելու, փակուղու մեջ հայտնվելու: Եվ մեր ձգտումների պատրանքայնությունը և սխալը բացահայտում ենք միայն այն ժամանակ, երբ դրանք մեզ պատճառել են անուղղելի վնաս, և մեր լավագույն ուժերն արդեն ծախսվել են նրանց վրա»<sup>6</sup>:

<sup>6</sup> С. Л. Франк. О смысле жизни. - "Вопросы философии", 1990, № 6, с. 97.

Դասական փիլիսոփայության մեջ քննարկման առարկա են եղել գլխավորապես մարդու էությանն առնչվող հարցեր, նրա սեռային պատկանելիությունը ներկայացնող համընդհանրության այն իրողությունները, որոնք կապված են եղել բնություն, մատերիա, սուբստանցիա, կեցություն, մարմին, բանականություն, աստված, տիեզերք և այլ հասկացությունների հետ: Պատմական զարգացման ընթացքում աստիճանաբար, որպես օբյեկտիվ անհրաժեշտություն, կարևորվեց վերացական և անդեմ համընդհանրության անհատականացման, սոցիալական ժամանակի, տարածության մեջ կոնկրետ, առանձին մարդու գոյության և լինելիության հիմնահարցը: Ընդ որում, կոնկրետ անձնավորության գոյությունը հենց սկզբից ընկալվեց որպես «իռացիոնալ և պարադոքսալ» մի վիճակ, որն անբաժանելի է մարդու կյանքի իրական գործընթացից: Նման ըմբռնումը բնորոշ էր էկզիստենցիալիստական փիլիսոփայությանը: Այստեղ իշխող դարձավ այն միտքը, որ ռեալ գոյություն ունի միայն եզակին, անհատը, որից գոյանում է նաև «ամբողջը, ընդհանուրը»: Ուստի մարդկային կեցության հուսալիության երաշխիք համարվում է մարդու ներքին աշխարհի վերափոխումը, նրա անհատականության ձևավորումը որպես գոյության կենսաձև և ինքնահաստատման պայման:

Մարդու էության և գոյության միջև մշտապես ծագող տարաբնույթ հակասությունները պայմանավորված են նրա բնության երկակիությամբ: Մարդն իր մեջ համատեղում է բևեռային հակադրություններ, որոնք արտահայտվում են ամենից առաջ կենսաբանականի և սոցիալականի, մարմնի և հոգու, բանականի և զգայականի, ստորի և վեհի աններդաշնակ հարաբերություններով: Դրանք մարդու կեցությունը դարձնում են ավելի խնդրահարույց, հարափոփոխ, անկայուն ու անորոշ: Ըստ այդմ կարևորվում է այն հարցը, թե մարդու գոյության հակասական աշխարհում ինչպես պահպանել մարդկայինը մարդու մեջ: Հանրահայտ ճշմարտություն է, որ աշխարհը փոխվում է այնքանով, որքանով մարդն է փոխվում: Ընդ որում, այն կարող է փոխվել և՛ դեպի լավը, և՛ դեպի վատը: Երկու դեպքում էլ մենք գործ ունենք մարդու գործունեության առարկայական արդյունքների հետ: Աշխարհի վիճակը, նրանում իշխող արժեքները, բարքերը վերջին հաշվով մարդով են չափվում: Մարդիկ իրենց մտածելակերպով, գործողություններով, վարքով, հակասական շահերով, անհատական պահանջմունքների յուրահատկություններով ձևավորում են հասարակական որոշակի միջավայր, որը չի կարող չափվել միայն դրական արդյունքներով, այստեղ ձևավորվում են նաև պահպանողական, կազմալուծող ուժեր, որոնք խախտում են հասարակության զարգացման բնական ընթացքը և ավելի սրում մարդու էության ու գոյության միջև եղած հակասությունները: Այս դեպքում սոցիալական առաջընթացի հնարավորությունը որոշվում է նրանով, թե հասարակությունն իր հավաքական ուժով ինչքանով է կարողանում հաղթահարել մարդու գործունեության բացասական հետևանքներն ու ապահովել իր վերընթաց զարգացումը: Իսկ դա մեծապես պայմանավորված է նրանով, թե ինքը՝ մարդը, ինչ չափով է փոխվում ժամանակի պահանջներին համապատասխան և իրացնում իր ներքին պոտենցիալ հնարավորություններն ու կարողությունները: Մարդու էությունը սուբստանցիոնալ բնույթ ունի. այսինքն՝ այն ներկայացնում է կեցության ավելի պահպանողական, հարաբերականորեն կայուն ու դանդաղ փոփոխվող կողմը: Իսկ մարդու գոյությունը խիստ հարաշարժ ու փոփոխական է. այն կրում է սոցիալական կյանքի ամբողջ դինամիզմն ու հակասականությունը: Մարդն իր գոյությամբ, նայած արժեքների ինչ համակարգում է գործում, կարող է նաև աղավաղել իր էությունը, օտարվել նրանից: Մինչդեռ խնդիրն այն է, որ որոշակի ներդաշնակություն հաստատվի մարդու էության և գոյության միջև: Դարաշրջանից դարաշրջան փոխվել են մարդու էության և գոյության հարաբերակցության մասին եղած պատկերացումները, տրվել բազմաթիվ բնութագրումներ, սահմանումներ: Դրանք արտահայտվել են կա՛մ օբյեկտիվ,

կա՛մ էլ սուրյեկտիվ չափանիշներով: Գոյություն ունեցող մարդաբանական տեսություններում մարդու էությունը բնութագրելիս լավագույն դեպքում առանձնացվել է կենդանուց մարդուն տարբերող այս կամ այն հատկանիշը: Մի դեպքում դա եղել է բանականությունը, մի այլ դեպքում մտածելու, ստեղծագործելու կարողությունը, արտադրելու, գործիք պատրաստելու ընդունակությունը և այլն: Այդ բոլոր սահմանումները թերի են եղել և չեն արտահայտել մարդու էության բազմաչափությունը՝ որպես ամբողջական համակարգ: Որպես այդպիսին՝ մարդը դիտարկվում է տիեզերականի, կենսաբանականի, սոցիալականի, մշակույթի, հոգեբանականի չափումներով ու համատեքստում: Դասական փիլիսոփայության մեջ անտեսվել է մարդու համակարգայնությունը և ավելի շատ խոսվել իրականությունից դեռ շատ հեռու, գոյության իրական հիմքերից կտրված մարդու վերացական, իդեալական կերպարի, այսպես կոչված «նոր մարդու» տեսակի մասին: Իսկ իրականում մարդը ներկայացել է և այժմ էլ հոգևոր ու բարոյահոգեբանական զարգացման մակարդակով դեռ ներկայանում է որպես շատ անկատար, բազմաթիվ արատներով, խիստ հակասական ու պարադոքսալ մի էակ: Մի խոսքով, մի դեպքում մարդը ներկայացվել է որպես «հրեշտակ», «բնության բարձրագույն պսակ», մի այլ դեպքում՝ որպես ոչնչություն, թույլ և խղճուկ մի էակ: Այս ծայրահեղ գնահատումները չեն նսեմացնում մարդուն: Նրա վեհությունը, արժանիքը, ուժն այն է, որ նա բանական, մտածող էակ է՝ ընդունակ ինքն իրեն հաղթահարելու և անվերջ ինքնակատարելագործվելու, իր հոգևոր ներուժը իրացնելու, ձևավորվելու որպես անձ: Իսկ անձը ամենից առաջ հոգևոր կազմավորում է, որն արտահայտում է մարդու իսկական էությունը, իր և հասարակության պահանջներին համարժեք մտածելակերպով, գործելակերպով, գոյության եղանակով ու պատասխանատու վարքով: Այս դեպքում անձի մեծությունը և ուժի չափը որոշվում է նրանով, թե ինչքանով է նա կարողանում հաղթահարել կյանքի հակադրությունները, պահպանել իր մարդկային արժանիքները, ընդունել ժամանակի մարտահրավերները, հասկանալ կյանքի իմաստը և ներքին հոգեկան ապրումի փոխակերպումներով ինքնահաստատվել որպես սոցիալական առաջընթացի լիարժեք սուրյեկտ:

**М. М. ХАЧАТРЯН - К вопросу о соотношении сущности и существования человека.** - В статье рассматриваются некоторые малоисследованные теоретические и методологические аспекты соотношения сущности и существования человека. Сущность человека представляет его родовую характеристику и включает в себя совокупность потенциальных возможностей, которые реализуются в процессе индивидуального существования. Мера изменения сущности определяется действенным отношением человека к условиям своего бытия. Существование рассматривается как постоянный поиск бытия человека, приобретения смысла жизни, адекватной реализации его сущностных сил в соответствии с требованием времени. Отмечается противоречивость отношений сущности и существования, факторы ее преодоления и установления определенной соразмерности между ними как способ гармонизации внешнего и внутреннего мира человека.